ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

05.07.2024 08:48

Հարգելի՛ փաստաբաններ,

04.07.2024թ., ժամը 19:00-ից սկսած, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Ջաքիյան փողոց 7-2, 4-րդ հարկ) տեղի ունեցավ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի մարզերում մարզային համակարգողների 2024 թվականի ընտրությունների քվեաթերթիկների տպագրությունը:

Տպագրվել են.

● Շիրակի մարզի մասով՝ 69 հատ քվեաթերթիկ (67 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),

● Լոռու մարզի մասով՝ 82 հատ քվեաթերթիկ (79 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 3 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),

● Արարատի մարզի մասով՝ 64 հատ քվեաթերթիկ (62 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),

● Սյունիքի մարզի մասով՝ 43 հատ քվեաթերթիկ (41 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),

● Արմավիրի մարզի մասով՝ 67 հատ քվեաթերթիկ (65 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 2 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով),

● Արագածոտնի մարզի մասով՝ 22 հատ քվեաթերթիկ (21 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 03.07.2024թ. դրությամբ և 1 հատ՝ ընտրողների ցուցակի երեք տոկոս ավել չափով):

Տպագրված քվեաթերթիկները կնքվել են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով, փաթեթավորվել են պարկերում և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի ու ընտրողների ցուցակների հետ միաժամանակ տեղադրվել են չհրկիզվող պահարանում, որը պատշաճ կարգով կնքված կապարակնիքով փակվել է:

Բեռնել Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերի մարզային հաշվիչ հանձնաժողովի 04.07.2024թ. թիվ 4-Լ արձանագրությունը:

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերի մարզային հաշվիչ հանձնաժողով

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })